

Որ կամիցի անդատապարտ մնալ ի դատաստանին,  
Աստ մի դատապարտեսցէ զեղբայր իւր:


Որ կամիցի զերծանել ի բոցածաւալ ծովէն,  
Աստ ծովացուսցէ զաչս իւր արտասուաւք:

Որ ցանկա մտանել յանվրէպ վայելչութիւն.,  
Աստ մի հեղգասցի երթալ ի տեսութի. հիւանդաց:

Որ աստ մախա ընդ այլոց բարէկեցութի.,  
ԱնՏ չառնու զվարձս վաստակոց իւրոց:

Որ աստ հարկանէ անողորմ զմարդ կամ զանասուն,  
ԱնՏ հարկանի հրեղէն գաւազանաւ:

Որ աստ փակէ զգութ իւր ի տնանկաց,  
ԱնՏ նմա փակի դուռն առագաստի:



Պատկեր 159.

Որ կամիցի ըմբել յաղբերէն կենաց,  
Աստ կարաւտ կացցէ ապակւոյ միոյ զինւոյ:

Որ կամիցի քաղցր և անուշ լսել զբարբառ փողոյն,  
Աստ մի անտես արասցէ զձայն կարաւտելոց:

Ապա ընթերցողի ուշագրութիւնը հրաւիրելով  
թափանցելու իւր ասածների եւ ասելիքների իմաստի  
մէջ, փոխում է խրատականի ձեւը, կարծես, միա-  
կերպութիւնից խուսափելու համար.

Որ աստ զինւով զմայլի,  
Անդ կարաւտանա կաթիլ մի ջրոյ:

Երրորդ հատուածի մէջ սիրոյ պատուէրն է յանձ-  
նարարում. բայց ամենից բարձր առաքինութիւնը խո-  
նարհութիւնն է. «Թէ զամ. աւրէնս կատարես եւ  
խոնարհութի. չունիս, ի գուր եւ ընդ վայր աշխա-  
տիս, եւ ոչինչ աւգտիս յամ. բարեգործութիւն. քո,  
որպէս այն, որ ի յաւդ փչէ եւ կամ ի ծակ կարաս  
ջուր արկանէ»:

Որատական թղթերից մէկն էլ ուղղուած է «սրբ-  
տակից սեռն եւ սերտ սիրելի ի տր. Սարգիս քահա-  
նայ», որ հարցրել էր նորան, «եթէ զի՞նչ օրինակաւ  
պարտ է կեալ ըստ կամացն այ.: եւ կամ թէ ո՞րպէս  
պիտոյ է քաղաքավարիլ եւ զերծանիլ ի վշտագին եւ